

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2011Թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ, ՄԱՐԶԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց Ձորի մարզն ընդգրկում է Վայքի, Եղեգնաձորի տարածաշրջանները՝ 44 համայնքներով (3-ը՝ քաղաքային, 41-ը՝ գյուղական): Մարզն ունի շուրջ 56.0 հազ. բնակչություն, որից 19.4 հազ.՝ քաղաքաբնակ (34.6%), 36.6 հազարը՝ գյուղաբնակ (65.4%):

Մարզում 2011թ-ի ընթացքում թողարկվել է 7241,5 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է Հանրապետությունում արտադրված արտադրանքի 0.9 %-ը (2009թ. համեմատ մարզում ավելի է արտադրվել 1012,6 մլն դրամի արտադրանք): Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 0,8-0,9 %-ը (մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքի ցուցանիշները հանրապետական միջինի նկատմամբ՝ **հավելված 1-ում**):

Արդյունաբերական արտադրանքի ծավալները համադրելի գներով համեմատելիս նույնպես արձանագրվել է աճ՝ 851.8 մլն դրամի չափով: Աճ է գրանցվել հանքագործական արդյունաբերությունում (շուրջ 140.6 մլն դր.), մշակող արդյունաբերությունում (շուրջ 337.7 մլն դրամ), ջրամատակարարման ոլորտում (շուրջ 16.4 մլն դրամ) և էլեկտրականության ոլորտում (շուրջ 357.0 մլն դր.): Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 114,7 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 15,6 %-ով (մարզում արդյունաբերական արտադրանքի 2010-11թթ. տարեկան տեղեկատվությունը և համեմատականը մյուս մարզերի հետ՝ **հավելված 2-ում**):

Բոլոր աղբյուրներով մարզում 2011թ.-ին իրականացվել են 5121,4 մլն դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 182,5մլն դրամով (ընթացիկ գներով): 2011թ-ին իրականացված կապիտալ ներդրումները կազմել են հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 0,9 %-ը **հավելված 3-ում**):

2010-11թթ. շինարարության ցուցանիշները ըստ մարզերի և Երևան քաղաքի բերված են **հավելված 4-ում**:

2011թ-ի հունվարի 1-ի դրությամբ մարզում արտադրվել է 8947.4 մլն դրամի անասնաբուծական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 3,65 %-ը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված մթերքի՝ 96.7 %-ը: Բուսաբուծության ոլորտում արտադրվել է 4883.5մլն դրամի արտադրանք (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտադրանքի 90,3 %-ը), որը կազմել է հանրապետական արտադրանքի 1,24 %-ը (անասնաբուծական և բուսաբուծական մթերքի արտադրության 2010-11թթ. տարեկան տեղեկատվությունը և համեմատականը մարզերի հետ՝ **հավելված 5-ում**):

¹ ՀՀ Վայոց Ձորի մարզի վերաբերյալ տեղեկանքի կազմման համար տեղեկատվություն է պահանջվել հետևյալ ՀԳՄ-ների ղեկավարներից. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (նաև Վայոց Ձորի մարզպետարան), ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության, ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություններ /հիմնախնդիրները ներառվել են տեղեկանքում/: ՀՀ ԿԳՆ, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ առողջապահության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունները ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ են նշել:

1.1. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2011թ-ին պետական բյուջեից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին նախատեսված ֆինանսավորման ամբողջ գումարը կազմել է շուրջ 2317423.6 մլն դրամ:

| Ֆինանսավորման ոլորտը | 2009թ. գումարը /հազ.դրամ/ | 2010թ. գումարը /հազ.դրամ/ | 2011թ. նախատեսված /հազ.դրամ/ |
|---|---------------------------------|---------------------------------|------------------------------------|
| ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | 190862.4 | 196644.04 | 209448.1 |
| Կրթություն, այդ թվում | 1795947.3 | 1761127.5 | 1620535.9 |
| -Հանրակրթական ուսուցում | 1749112.6 | 1713255.3 | 1568362.9 |
| -Արտադպրոցական դաստիարակություն | 22974.7 | 22974.7 | 25049.0 |
| -Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում | 13438.0 | 13478.5 | 14705.3 |
| -Մանկավարժների և դպր. երեխաների տրանսպորտ. ծախսերի փոխհատուցում | 10422.0 | 11419.0 | 12418.7 |
| Կրթական հիմնարկների հիմնանորոգում | 184012.4 | 88429.9 | 144340.0 |
| Մշակույթ | 14563.4 | 14575.9 | 17677.6 |
| ՀՀ կառավ. պահուստային ֆոնդից | 6490.0 | 58653,8 | 260000.0 |
| Ավտոճանապարհների ձմեռային պահպանում և շահագործում | 66970.8 | 65422.8 | 65422.0 |
| Ընդամենը | 2258846.3 | 2184853,94 | 2317423.6 |
| Դոտացիա | 537210.0 | 660645.1 | 664523.0 |

ՀՀ Վայոց Ձորի մարզում 20.06.2011թ. դրությամբ առողջապահական կազմակերպություններում առկա է շուրջ 2,257.7 հազ. դրամի պարտք, իսկ աշխատավարձի գծով պարտքեր չկան (**հավելված 6**):

Մարզի համայնքների բյուջեներով եկամտային մասը 2011 թվականի հինգ ամիսների համար նախատեսվել է 416.3 մլն դրամի չափով, որի կատարողականը կազմում է 97.5 %, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 95.0%-ի փոխարեն, իսկ գումարային արտահայտությամբ նվազումը կազմում է 4.3 մլն. դրամ: 01.06.2011թ. դրությամբ ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների եկամուտների հանրապետական ցուցանիշները ներկայացված են **հավելված 7**-ում: Հավելված 8-ում ներկայացված են ՀՀ քաղաքային համայնքների հողի հարկի և գույքահարկի ցուցանիշները, իսկ ՀՀ Վայոց Ձորի մարզի հողի հարկի և գույքահարկի ցուցանիշներն ըստ համայնքների ներկայացված են **հավելված 9**-ում): 15.06.2011թ. դրությամբ ՀՀ համայնքների (ըստ մարզերի) կողմից կուտակված աշխատավարձի և սոց. վճարների գծով պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 10**-ում:

1.2 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության և մշակույթի բնագավառներում իրականացվել է 527.329 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Եվս 130.0 մլն դրամի աշխատանքներ են իրականացվել Հայաստանի սոցիալական ներդրումներ հիմնադրամի կողմից (2011թ. քաղաքաշինության բնագավառում ներդրումները բերված են **հավելված 11-ում**):

2011թ.-ին քաղաքաշինության բնագավառում նախատեսված ներդրումները ներկայացված են **հավելված 12-ում**:

ՀՀ կառավարության 03.02.2011թ. թիվ 108-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին հատկացվել է 260 մլն դրամ:

ՀՀ կառավարության 29.09.2011թ. թիվ 1436-Ն որոշմամբ հրատապ ծրագրերի 2-րդ փուլի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզին հատկացվել է 260 մլն դրամ:

Երկու փուլերով հատկացված գումարների բախշումը /520.0 մլն.դրամ/ ներկայացված է **հավելված 13-ում**:

ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆԿ-128-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով իրականացվող և դեռևս չավարտված աշխատանքները ներառված են մարզի 2013-2015 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերում և ներկայացվել են համապատասխան ոլորտային գերատեսչություններին (մարզում իրականացվելիք ՆԿ-128-Ա կարգադրությամբ հաստատված աշխատանքների ընթացքի մասին՝ **հավելված 14-ում**):

1.3. ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թ. դրությամբ մարզում գազիֆիկացվել են 7075 բնակարաններ, որոնցից 4079-ը՝ բազմաբնակարան շենքերում, իսկ 2996-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների պատկերը հետևյալն է.

| Տարածաշրջանը | Բնակավայրերի թիվը | Ընդ. բաժանորդ | Այդ թվում | |
|-----------------|-------------------|---------------|-------------|-------------|
| | | | ԲԲՇ | Առանձնատուն |
| Եղեգնաձոր | 8 | 3315 | 1016 | 2299 |
| Վայք | 4 | 1555 | 1056 | 499 |
| Ջերմուկ | 2 | 2205 | 2007 | 198 |
| Ընդամենը | 14 | 7075 | 4079 | 2996 |

Հանրապետությունում և մարզում գազիֆիկացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված **հավելված 15-ում**:

ՀՀ Վայոց ձորի մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ԱրմենՏել>>, «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» և «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ները:

<<ԱրմենՏել>> ՓԲԸ Վայոց ձորի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 15296 հեռախոսահամար, ներկայում բաժանորդների քանակը՝ 11475 (CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Եղեգնաձոր, Ագարակաձոր, Գետափ, Գլաձոր, Արփի, Արենի, Խաչիկ, Չիվա և Ելփին համայնքներում, ներկայում բաժանորդների քանակը՝ 1422):

1.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2011թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 297 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ նախատեսված է իրականացնել 236 կմ ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ շուրջ 68.3մլն դրամ արժեքով և նույն նշանակության 190.98 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 228.7 մլն դրամ արժեքով: 2011թ. ՀՀ պետ. բյուջեով Վայոց ձորի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 65.422 մլն. դրամ: Նշված ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզպետարանի պատվիրատվությամբ նախատեսված է իրականացնել 118.7 կմ՝ 45.0 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 27.1 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 20.422 մլն դր. արժեքով:

2011թ. ՀՀ պետական բյուջեով Վայոց ձորի մարզում իրականացվել է՝

1. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 97+220 – կմ 97+280 սողանքային տեղամասի վերանորոգում - 93.2 մլն. դրամ:
2. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 115կմ-ում փլվածքային տեղամասի վերականգնում - 25.6 մլն. դրամ
3. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 119կմ-ում փլվածքային տեղամասի վերականգնում - 43.4 մլն. դրամ
4. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 121.5կմ -ում Գետափի կամրջի վերանորոգում - 56.9 մլն. դրամ
5. Մ-10 – Հորս ավտոճանապարհի 2.8 կմ հատվածի հիմնանորոգում - 420.5մլն. դրամ

6. Մ-10 – Շատին - Գողթանիկ ավտոճանապարհի 1-ին կմ-ում փլուզված հատվածի վերականգնում - 118.4 մլն. դրամ
7. Մ-10 – Քարագլուխ ավտոճանապարհի հիմնանորոգում – 145.2 մլն. դրամ
8. Եղեգնաձոր քաղաքի Նարեկացու փողոցի բարեկարգում 0.245կմ 35.5մլն. դրամ
9. Վայք քաղաքի Իսրայել Օրու փողոցի բարեկարգում 0.2կմ 14.5մլն. դրամ
10. Եղեգնաձոր քաղաքի Գևորգյան փողոցի վերանորոգում, ասֆալտապատում 49.8մլն. դրամ

Ընդհանուր առմամբ 2011 թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներդրումները կազմում են 1365.4 մլն դրամ:

Մարզի քաղաքային համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բավարարակով ընդունելու 4-7 հեռուստաձրագիր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 1-ից 3 հեռուստաձրագիր:

1.5. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետարանի կողմից ուշադրություն է դարձվում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացին: Հողերի օտարման մեխանիզմների կատարելագործման, հողերի օտարումներից առաջացած ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով, մարզպետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում աճուրդների անցկացման, հրապարակայնության ապահովման, մեկնարկային գների սահմանման և օտարումներից գոյացած միջոցները առաջնահերթության կարգով համայնքների քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի նախագծման և կազմման, ինչպես նաև համայնքների սոցիալական ծրագրերի իրականացման նպատակներով օգտագործելու համար (վարձակալությամբ տրամադրված հողամասերի վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը՝ **հավելված 16-ում**):

2011թ. ընթացքում մարզում օտարվել է 63.6 հա հողատարածք, որի արդյունքում ձևավորվել է շուրջ 60.87 մլն. դրամ հասույթ (<< մարզում իրականացված հողերի աճուրդ-վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 17-ում**):

1.6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011թ-ին մարզում բերքատու պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 1894 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 33 հա- ով, իսկ բերքատու խաղողի այգիների տարածությունը մնացել է նույնը՝ 809 հա:

2011թ. ընդամենը ցանքային տարածությունը կազմել է 4511 հա,իսկ 2010թ –ին՝ 4477 հա, կամ ավելացել է 34 հա-ով :Մանրամասն տեղեկատվությունը բերված է **հավելված 18-ում**:

2011թ. բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի գծով համախառն բերքի ցուցանիշների համեմատականը նախորդ տարվա ցուցանիշների նկատմամբ.

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը Վայոց ձորի մարզում 2110-2011թթ.

| h/h | Անվանումը | տարածությունը հա | | | համախառն բերքը ց | | | |
|-----|---------------------|------------------|-------|-------|------------------|--------|-------|-------|
| | | 2010թ | 2011թ | տարբ. | 2010թ | 2011թ | տարբ. | % |
| 1 | Հացահատիկ | 2542 | 2505 | -37 | 40670 | 59150 | 18480 | 145.4 |
| 2 | Հատիկարնդեղեն | 67 | 72 | 5 | 841 | 1303 | 462 | 154.9 |
| | Հացահ. և հատիկարնդ. | 2609 | 2577 | -32 | 41511 | 63030 | 21519 | 151.8 |
| 3 | Բանջարեղեն | 432 | 437 | 5 | 64508 | 66676 | 2168 | 103.4 |
| 4 | Բոստան | 18 | 19 | 1 | 2682 | 3030 | 348 | 113.0 |
| | Բանջար. և բոստ. մշ. | 450 | 456 | 6 | 67190 | 69706 | 2516 | 103.7 |
| 5 | Կարտոֆիլ | 179 | 182 | 3 | 29565 | 30920 | 1355 | 104.6 |
| 6 | Պտուղ և հատապտուղ | 1861 | 1894 | 33 | 26171 | 33372 | 7201 | 127.5 |
| 7 | Խաղող | 809 | 826 | 17 | 38085 | 42105 | 4020 | 110.6 |
| 8 | Խոտ | | | 0 | 236301 | 237985 | 1684 | 100.7 |
| | Ծղոտ | | | 0 | 11420 | 14500 | 3080 | 127.0 |
| | | | | 0 | | | | |
| | ընդ. Գարնանացան | 2342 | 2381 | 39 | | | | |
| | ընդ. ցանք. տարած. | 4477 | 4511 | 34 | | | | |
| 9 | Կաթ | | | | 185000 | | | |
| 10 | Միս | | | | 54000 | | | |
| 11 | Ձու մլն. Հատ | | | | 15.4 | | | |

Ինչպես երևում է աղյուսակից հիմնական բոլոր ցուցանիշներով 2011թ-ին աճ է նկատվել 2010թ համեմատությամբ:

Որոշակի աշխատանքներ են կատարվել հանքային պարարտանյութերի և թունաքի-միկատների ձեռք բերման և օգտագործման ուղղությամբ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2011թ. անվճար տրված 175 կգ. ցինկի ֆոսֆիդ թունանյութով պայքարի աշխատանքներ է իրականացվել մարզի 12 համայնքներում շուրջ 1400 հա հողատարածքի վրա:

2011թ. մարզ է ներկրվել մոտ 100 տ ազոտական պարարտանյութ:

2010թ. մարզի վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 2300 տոննա խաղող: Խաղող վերամշակող ընկերությունների կողմից տնտեսվարող սուբյեկտներին է ամբողջությամբ վճարվել է:

Մարզում առ 1-ը հունվարի 2012թ դրությամբ առկա է 18301 գլուխ խոշոր եղջերավոր անասուն,որից կովեր՝ 8318 գլուխ, մանր եղջերավոր՝19213 գլուխ, խոզեր՝1206 գլուխ,թռչուններ՝40958 գլուխ և մեղվաընտանիք՝ 19211: **(հավելված 20):**

ՀՀ Վայոց Ձորի մարզում 2011թ-ին արտադրվել է շուրջ 5.4 հազար տոննա միս (կենդանի քաշով), 18.5 հազար տոննա կաթ և 15.1 մլն ձու (համապատասխանաբար հանրապետության անասնաբուծական արտադրանքի շուրջ 3.8%, 3.3 % և 2.4%-ը):

01.01.2012թ. դրությամբ մարզում առկա 797 տրակտորներից գարնան գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ էին 648-ը, 32 հացահատիկահավաք կոմբայներից՝ 27-ը: Գյուղատնտեսական առկա տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը: 2007-2011թթ. ընթացքում արտերկրի դրամաշնորհների հաշվին մարզ է ներկրվել 4 կոմբայն, իսկ 2010թ-ին 18անիվավոր տրակտոր իր գյուղ գործիքներով(հավելված 22):

1.7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 51 հանրակրթական դպրոց, որից 3 ավագ դպրոց ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ: Մարզային ենթակայությամբ գործող դպրոցներում սովորում են 6291 աշակերտ: Առաջին դասարանցիների թիվը 2011-12 ուս. տարում կազմում է 683 աշակերտ: 48 դպրոցներում կոմպլեկտավորվել է 483 դասարան, դասարանների միջին խտությունը կազմում է 13,2: Ուսուցիչների թիվը 920 է: Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը մարզում՝ 1/6,8: Մարզում գործում է նաև 1 միջին մասնագիտական պետական քոլեջ: Բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնում է Երևանի տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը: Մարզի կրթական ոլորտի հիմնախնդիրներից է լուծարման եզրին հայտնված բազմաթիվ գյուղական դպրոցների առկայությունը: Ներքին և արտաքին միգրացիայի հետևանքով մարզի սակավաբնակ գյուղական դպրոցներում բազմաթիվ են մեկ, երկու աշակերտով դասարանները, որի հետևանքով ձևավորվել են տարբեր տարիքային խմբերի համատեղ ուսուցման դասարաններ /երկկոմպլեկտ/: 2011-2012 ուս. տարում մարզի 14 դպրոցներում ձևավորվել են երկկոմպլեկտ դասարաններ: 2011-2012 ուս. տարում մարզի 22 համայնքներում բացվել են նախակրթարաններ, որոնցում ընդգրկվել են 470:

Մարզում առաջնահերթ են համարվում նաև նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները (մարզում առկա 17 նախադպրոցական հաստատություններում ընդգրկված են 805 երեխաներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը՝ **հավելված 23-ում**):

1.8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում են մարզային ենթակայության 9 բուժական հաստատություններ, այդ թվում քաղաքային համայնքներում՝ 1 բժշկական կենտրոն, 1 բուժական միավորում, 1 առողջության կենտրոն և 1 մարզային արյան փոխներարկման կայան Եղեգնաձորի ԲԿ-ի կազմում, գյուղական համայնքներում՝ 4 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, քաղաքային վայրերում գործում են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետներ Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջանների համար: Նշված բուժօգնություններին ամրակցված են 37 բուժակ-մանկաբարձական կետեր: Մարզի բուժօգնություններում աշխատում են 17 ընտանեկան բժիշկներ:

2011թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ստացիոնար բուժօգնություն է ստացել 1660 բնակիչ: Վճարովի հիմունքներով հիվանդանոցային բուժօգնություն է ստացել 252 հիվանդ: 2011թվականին նկատելի է աճ Առողջության Առաջնային Պահպանման ծառայություններից օգտվելու տեսանկյունից:² Նույն ժամանակահատվածում աճել է նաև հիվանդանոցային ծառայություններից օգտվողների թվաքանակը:

«Վայոց ձորի մարզի բժշկական հաստատություններում բժշկական թափուր հաստիքների թիվը կազմում է 18:

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Առողջապահական համակարգի արդիականացում» վարկային ծրագրի «Ընտանեկան բժշկության զարգացում» բաղադրիչի շրջանակներում մարզի առաջնային օղակի բուժաշխատողներից մինչ այսօր մասնագիտացել են 18 ընտանեկան բժիշկ և 22 ընտանեկան բուժքույրեր:

1.9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու տարում զգալի աշխատանքներ են կատարվել մարզի ազգաբնակչության սոցիալական հարցերի բարելավման ուղղությամբ:

Մարզի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում՝ Եղեգնաձոր, Վայք և Ջերմուկ տարվա ընթացքում փաստագրվել են 2400 ընտանիքներ՝

| | |
|------------------------|--------------|
| Եղեգնաձորի տարածաշրջան | 1677 ընտանիք |
| Վայքի տարածաշրջան | 459 ընտանիք |
| Ջերմուկի տարածաշրջան | 264 ընտանիք |

Նպաստի իրավունք է ստացել 1858 ընտանիք:

Սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում վճարված ընտանեկան նպաստների ընդհանուր գումարը տարվա ընթացքում կազմել է 565.6 մլն դրամ:

Հրատապ օգնության շրջանակներում վճարված ընդհանուր գումարը կազմել է 33.8 մլն. դրամ:

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները՝ 2011թ. ավանդի փոխհատուցում է տրվել 403 քաղաքացու:

2011 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստ է ստացել 649, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է ստացել 275 ,սոցիալական քարտ է տրամադրվել 3861 մարդու:

² Համաձայն ՀՀ ԱՎԾ և ՀՀ Վայոց Ձորի մարզպետի կողմից տրամադրված տեղեկատվության մարզում ԱԱՊ ծառայություններից օգտվելու նպատակով բուժհիմնարկներին կցագրվել է 55.846 մարդ:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2011թ. գրանցվել են 809 գործազուրկներ, աշխատանքի են տեղավորվել 375 մարդ, գործազրկության մակարդակը մարզում կազմել է 4.8% 2010թ. 4.4% փոխարեն:

Մարզի երեք ՍԱՏԿ-ներում հաշվառված են 10406 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 29.4 հազ դրամ :

Ուշադրության տրոնում են Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, Արցախյան պատերազմում զոհված, հաշմանդամ դարձած և դժվարին պայմաններում ապրող ընտանիքների սոցիալական աջակցության խնդիրները: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի մոտ կայացած ընդունելության եկած 762 քաղաքացիների հատկացվել է շուրջ 19882.0 հազ. դրամ դրամական օգնություն:

Մարզում խոցելի խմբերի թվաքանակի վիճակագրական տվյալները 2010թ. և 2011թ. կտրվածքով ներկայացված են աղյուսակում.

| Բովանդակություն | Եղեգնա ձոր | Վայք | Ջերմուկ | Ընդամենը |
|--|------------|------|---------|----------|
| ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /ամսական միջին/ 2010թ. | 1398 | 417 | 198 | 2013 |
| ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /ամսական միջին/ 2011թ. | 1288 | 385 | 185 | 1858 |
| երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացածների թիվը 2010թ. | 456 | 177 | 66 | 699 |
| երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացածները 2011թ. | 419 | 144 | 86 | 649 |
| գրանցված գործազուրկների թիվը 2010թ. | 322 | 261 | 417 | 1000 |
| գրանցված գործազուրկների թիվը 2011թ. | 231 | 234 | 344 | 809 |

1.10. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում են 2 թանգարան, 2 պատկերասրահ, 46 գրադարան, 5 երաժշտական արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 2 մշակութային կենտրոն, 38 մշակույթի տուն և ակումբ, 2 մանկական ստեղծագործական կենտրոն, 3 մարզադպրոց, 2 մարզադաշտ, 1 լողավազան և այլ մարզական ու մշակութային օջախներ:

Մարզում կազմակերպվել և անց են կացվել բազմաբնույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, երիտասարդական հավաքներ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային ծրագրեր: Երիտասարդության հետ տարվող աշխատանքները ակտիվացնելու նպատակով մարզում անց են կացվել ավանդական դարձած «Երիտասարդական հավաք փառատոն -2011 >>, « Լավագույն մարզական ընտանիք», Ուրախների և հնարամիտների մրցույթ, կազմակերպվել են մարզամշակութային տարբեր փառատոններ, մասսայական միջոցառումներ, ցուցահանդեսներ ու մրցույթներ:

Մարզը հանդիսանում է երկրի ամենակարևոր պատմական և մշակութային հուշարձաններից շատերի հայրենիքը: Հուշարձաններից ամենակարկառունը Նորավանքն է, ապա նաև Թանահատը, Սպիտակավորը, Ցախաց քարը, Գնդեվանքը ու էլի շատ ու շատ պատմամշակութային կոթողներ:

1.11. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

«Վայոց ձորի մարզում 13 հանքավայրերը շահագործվում են 12 կազմակերպությունների կողմից: Արդյունահանվում է երեսապատման քարեր, բազալտ, գրանիտ, հրաբխային խարամ և ավազակոպճային խառնուրդ: Ուսումնասիրման փուլում է Ագատեկի ոսկու բազմամետաղային հանքավայրը: Մարզում գործում են քարի վերամշակման 11 արտադրամասեր:

Մարզում բնապահպանական առումով խիստ պրոբլեմային խնդիր է մնում թափոնների տարերայնորեն տեղադրման, անկանոն աղբահանության և աղբավայրերի ոչ կանոնակարգված ձևով օգտագործման հարցը: Մարզի 3 քաղաքային և 10 գյուղական համայնքներ ունեն աղբավայրեր իսկ 10 գյուղական համայնքներում սկսվել է աղբավայրերի տեղադրման գործընթացը: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի ռեկրեացիոն գրավչության վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակազծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբահանության աշխատանքների բարելավում:

Մարզում անտառային տարածքը կազմում է 15,063 հազ. Հա, որից անտառածածկ է 7656 հա: Մարզի բնապահպանական գերակա հիմնախնդիրներից է նաև անտառների վերականգնումը, վերարտադրությունը, անտառային ռեսուրսների պահպանությունը և կայուն օգտագործումը: Նախորդ տարիներին մարզի անտառածակույթը զգալի կորուստ է կրել վնասատուներով և հիվանդություններով վարակման դեպքերի, հրդեհների ինչպես նաև էներգետիկ ճգնաժամի պատճառով: Անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ աշխատանքներ անտառների պահպանության, պաշտպանության տնկարկների հիմնման, վերարտադրության և վերականգնման բնագավառներում:

Մարզում մշակվող հողատարածքների սակավության պատճառով յուրացվում են նաև մեծ թեքության լանջեր, կտրտված ռելիեֆով, սելավավտանգ, ողողվող, ջրածածկման ենթակա հողամասեր, որի հետևանքով ուժեղանում է հողերի դեգրադացիան և ինտենսիվանում են հողերի սողանքային երևույթները:

Սողանքների, սելավների հետևանքով հասցվող վնասի նվազեցման համար պետք է ուսումնասիրվեն առավել խոցելի տարածքները: Հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակների և հողերի դեգրադացիայի կանխարգելման համար զգալի ֆինանսական

միջոցներ են անհրաժեշտ վտանգավոր տարածքների կառուցապատման ինժեներապաշտպանական միջոցառումների կազմակերպման համար, պետք է մշակվի և իրագործվի մարզային և համայնքային իշխանությունների միջոցառումների համաձայնեցված պլան:

Մարզի ռեկրեացիոն գրավչությունը բարձրացնելու համար պետք է հաշվի առնել նաև, որ բացառությամբ Եղեգնաձոր, Վայք և Ջերմուկ քաղաքային համայնքների, մյուսներում բացակայում է կոյուղու համակարգը: Նախնական մաքրման կայաններ չկան մարզի բոլոր համայնքներում և կեղտաջրերը անարգել թափվում են համայնքների տարածքներով հոսող գետերի ավազանները:

Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը՝ կենցաղային և արտադրական գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերն են, անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Տուրիզմի զարգացմանը զուգընթաց պետք է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար համակարգերի կիրառումը և մարզի ու համայնքների զարգացման պլաններում այդ ենթակառուցվածքների վերականգնման համար համապատասխան միջոցներ նախատեսել:

1.12. ԱՌԵՎՏՈՒՐ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Ներկայում մարզում գործում է 210 առևտրային ձեռնարկություն, այդ թվում 1 սպառողական ապրանքների և 1 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

2010թ. առաջին եռամսյակի տվյալներով մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը (ընթացիկ գներով) կազմել է 796.8 մլն. դրամ /2009թ. համապատասխան ցուցանիշը կազմել է 853.0մլն. դրամ/: Մարզում բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը 2010թ. առաջին եռամսյակի տվյալներով կազմել է 580.2մլն. դրամ (ընթացիկ գներով) /2009թ. համապատասխան ցուցանիշը կազմել է 336.0մլն. դրամ/:

2010թ. հունվար-հոկտեմբեր եռամսյակի տվյալներով մարզում զբաղվածների թիվը կազմում է 23480 մարդ, որից արդյունաբերության ոլորտում՝ 3100 մարդ, գյուղատնտեսության ոլորտում՝ 13,737 մարդ, կրթության և մշակույթի ոլորտում՝ 1600 մարդ, առևտրի ոլորտում՝ 1450 մարդ:

2010թ. Վայոց ձորի մարզի զբաղվածության կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողները կազմում են 1700 մարդ, որից Եղեգնաձորի տարածաշրջան՝ 562, Վայքի տարածաշրջան՝ 1089 մարդ:

Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2010թ. դեկտեմբերի վերջի դրությամբ

| | Աշխատանք փնտրողներ /հազ. մարդ/ | | | նրանցից՝ չգբաղվածներ /հազ.մարդ/ | | | որոնցից՝գործազուրկներ /հազ. մարդ/ | | |
|----------|--------------------------------|--------------------------------|-------|---------------------------------|--------------------------------|-------|-----------------------------------|--------------------------------|-------|
| | Ընդամենը | նրանցից՝ երիտասարդներ, տարեկան | | Ընդամենը | նրանցից՝ երիտասարդներ, տարեկան | | Ընդամենը | նրանցից՝ երիտասարդներ, տարեկան | |
| | | 16-24 | 25-30 | | 16-24 | 25-30 | | 16-24 | 25-30 |
| Ընդամենը | 93.2 | 7.8 | 11.9 | 80.4 | 5.8 | 9.6 | 78.8 | 5.7 | 9.7 |
| ք. Երևան | 28.7 | 1.2 | 2.9 | 27.0 | 1.1 | 2.7 | 26.7 | 1.0 | 2.6 |

| | Աշխատանք փնտրողներ /հազ. մարդ/ | | | նրանցից՝ չգբաղ- վածներ /հազ.մարդ/ | | | որոնցից՝գործազուրկներ /հազ. մարդ/ | | |
|------------------|-----------------------------------|--------------------------------------|------------|--------------------------------------|---------------------------------------|------------|--------------------------------------|--------------------------------------|------------|
| | Ընդա- մենը | նրանցից՝ երիտասարդներ, տարեկան | | Ընդա- մենը | նրանցից՝ երիտասարդնե ր, տարեկան | | Ընդա- մենը | նրանցից՝ երիտասարդներ, տարեկան | |
| | | 16-24 | 25-30 | | 16-24 | 25-30 | | 16-24 | 25-30 |
| Արագածոտն | 2.5 | 0.4 | 0.4 | 1.4 | 0.2 | 0.2 | 1.4 | 0.2 | 0.2 |
| Արարատ | 4.3 | 0.4 | 0.6 | 3.4 | 0.3 | 0.4 | 3.3 | 0.3 | 0.4 |
| Արմավիր | 3.8 | 0.3 | 0.4 | 3.2 | 0.2 | 0.3 | 3.2 | 0.2 | 0.3 |
| Գեղարքունիք | 7.7 | 0.6 | 1.2 | 5.9 | 0.3 | 0.9 | 5.8 | 0.3 | 0.8 |
| Լոռի | 12.2 | 1.4 | 1.8 | 10.8 | 1.1 | 1.5 | 10.7 | 1.1 | 1.5 |
| Կոտայք | 7.9 | 0.6 | 1.0 | 7.0 | 0.5 | 0.9 | 7.0 | 0.5 | 0.9 |
| Շիրակ | 11.7 | 1.3 | 1.5 | 10.1 | 1.0 | 1.2 | 9.5 | 1.0 | 1.1 |
| Սյունիք | 7.2 | 0.7 | 1.0 | 5.6 | 0.4 | 0.7 | 5.4 | 0.4 | 0.7 |
| Վայոց ձոր | 1.4 | 0.2 | 0.2 | 1.0 | 0.1 | 0.1 | 1.0 | 0.1 | 0.1 |
| Տավուշ | 5.7 | 0.7 | 0.9 | 4.9 | 0.6 | 0.8 | 4.9 | 0.5 | 0.7 |

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2009թ. մարզի կազմակերպություններում կազմել է 78302 դր. (2008թ. հունվար-դեկտեմբերի համեմատ աճել է 6.3%-ով), որը սակայն, հանրապետության միջինի նկատմամբ պակաս է եղել 23.2%-ով: 2010թ. սեպտեմբերի ցուցանիշը 2009թ. նույն ամսվա համեմատ բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ մարզերում և Երևանում, 2010թ. Դեկտեմբերի դրությամբ

| | Անվանական միջին աշխա- տավարձը, դրամ | Ընդամենի նկատմամբ, % | 2009թ. նույն ամսվա նկատմամբ, % | Սահմանված նվազա- գույն աշխատավարձի նկատմամբ, անգամ |
|------------------|---|----------------------------|--------------------------------------|--|
| Ընդամենը | 136729 | 100.0 | 104.5 | 4.6 |
| ք. Երևան | 155175 | 113.5 | 102.5 | 5.2 |
| Արագածոտն | 89209 | 65.2 | 93.3 | 3.0 |
| Արարատ | 100389 | 73.4 | 111.0 | 3.3 |
| Արմավիր | 106402 | 77.8 | 99.5 | 3.5 |
| Գեղարքունիք | 100402 | 73.4 | 99.7 | 3.3 |
| Լոռի | 95909 | 70.1 | 102.8 | 3.2 |
| Կոտայք | 123897 | 90.6 | 108.3 | 4.1 |
| Շիրակ | 91809 | 67.1 | 101.5 | 3.1 |
| Սյունիք | 173588 | 126.9 | 120.6 | 5.8 |
| Վայոց ձոր | 93061 | 68.1 | 104.6 | 3.1 |
| Տավուշ | 93065 | 68.1 | 101.0 | 3.1 |

Քաղաքաշինության և բնակ-կոմունալ բնագավառներում առկա հիմնախնդիրներ.

1. Մարզում առկա է 217 անհատական բնակելի տներ, որոնք գնահատվել են IV և V կարգի վթարայնության՝ համաձայն 'Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ' ԲԲԸ կողմից տրված եզրակացության:
2. 1978թ-ին կառուցված Եղեգնաձոր քաղաքի Միկոյան -16 բազմաբնակարան շենքը համաձայն Հայսեյսմշին ԿՊ ԳՀԻ՝ ԲԲԸ (1999, 2004 թվականներին) և ՀՀ Կառավարությանն առընթեր ՍՊԱԾ-ի կողմից 2001 թվականին կատարված ուսումնասիրության եզրակացությունների՝ շենքի տեխնիկական վիճակը գնահատվել է III աստիճանի վթարային (ընդգրկված է ՀՀ Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը ՀՀ մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արձաձված խնդիրների ծրագրում):
3. Շատին գյուղի քարաթափումների ազդեցության ակտիվ գոտում գտնվող 32 տնտեսությունների բնակիչների տարահանումը:
4. Մարզի՝ Մարտիրոս, Չիվա և Ագարազաձոր գյուղերի սողանքային երևույթների կանխարգելման միջոցառումների իրականացում և բնակիչների տարահանումը:
5. Գազիֆիկացում՝
Վայոց ձորի մարզը ունի 44 համայնք՝ 3 քաղաքային և 41 գյուղական:
Այսօր գազիֆիկացված է մարզի 3 քաղաքային և 11 գյուղական համայնքներ:
Մարզի բնակավայրերի մոտ 70 % գազիֆիկացված չեն և գտնվում են նոր կառուցված Իրան - Հայաստան գազատարի հարևանությամբ:
Համայնքների գազիֆիկացումը կնպաստի ազգաբնակչության կենցաղային պայմանների բարելավմանը և կլուծի մի շարք բնապահպանական խնդիրներ:
6. Մարզը չի ընդգրկվել հակակարկտային համակարգերի տեղադրման ծրագրերում, տարեկան կարկտահարությունից մարզի գյուղատնտեսությանը հասցված վնասը կազմում է շուրջ 350 մլն. դրամ:
Խնդրվում մարզը ընդգրկել ծրագրում:
7. Մարզի 'Արփա' և 'Եղեգիս' գետերի վրա երեք տարիների ընթացքում հակահեղեղային միջոցառումներ չեն կատարվել և գետերի հորդացման ժամանակ հեղեղվում և ջրածածկ են լինում սեփականաշնորհված 120 հա հողեր:
Խնդրվում է գետերի առավել սելավավտանգ հատվածներում իրականացնել ավապաշտպան միջոցառումներ:

Գյուղատնտեսության բնագավառում առկա հիմնախնդիրներ.

Մարզում դեռևս առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

1. Հակակարկտային համակարգերի տեղադրում:
 2. Պտղի վերամշակման փոքր ձեռնարկությունների ստեղծում:
 3. Սերմնաբուծական տնտեսությունների և արհեստական սերմնավորման կայանների ստեղծում:
 4. "Արփա" և "Եղեգիս" գետերի առավել սելավավտանգ հատվածների ափերի ամրացում:
 5. Ոռոգման ներքին ցանցերի վերանորոգում:
- Ապահովագրական համակարգի ստեղծում

Ճանապարհաշինության բնագավառում առկա հիմնախնդիրներ.

Ճանապարհաշինության բնագավառի հիմնախնդիրները հիմնականում առնչվում են ներհամայնքային, միջհամայնքային ինչպես նաև հանդամիջյան ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներին:

- Հ-86 – Հորբատեղ հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 6 կմ:
- Մ-2 Կարմրաշեն - հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 19 կմ:
- Մ-2 Ելիին - հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 1.5 կմ:
- Մ-2 Չիվա-Ռինդ - հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 1.8կմ:
- Մ-2 Գետափ – մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 1.6կմ:
- Մ-2 Արտավան - հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 8.5կմ:
- Զառիթափ – Մարտիրոս - Բարձրունի հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում 6.5կմ:

8. Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան և Նարեկացու փողոցների բարեկարգում 1.8կմ:

Առողջապահության և սոցիալական ոլորտի հիմնախնդիրներ.

ՀՀ Կառավարության կողմից հաստատված ԱՀՌԾ-ի առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Վայոց ձորի մարզի վրա: Մասնավորապես կարևորվում են ընտանեկան բժշկության արագացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց համապատասխան մշակված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և հետևաբար ուժեղացնելու համար նպտակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավման, առաջնային և երկրորդային բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

Անհրաժեշտ է հիվանդանոցներից գոնե մեկում ստացիոնարի կազմում ունենալ վերակենդանացման բաժանմունք իր մասնագետներով և պահանջվող սարքավորումներով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրները

Մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական

ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

Շարունակական պետք է լինի ընտանեկան նպաստների ծրագրի և կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա կատարելագործման և միանվագ դրամական օգնության վճարների բարձրացման միջոցառումները, որոնք ուղղված են լինելու նաև մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Այս առումով մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1 հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,

2 ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տան պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,

3 խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովում,

4 կյանքի դժվարին իրավիճակներում հայտված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծումը,

5 փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,

6 սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը,

7 բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծման նպատակով, զբաղվածության մարզային կենտրոնների գործընկերային հարաբերությունների հաստատում պետական և մասնավոր կառույցների հետ, գյուղական բնակավայրերի բնակչության զբաղմունքների բազմազանեցում, ոչ գյուղատնտեսական ոլորտի ճյուղերի առաջանցիկ զարգացման խրախուսում, և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ու ուղղությունների մշակման և կիրարկման միջոցով: Միաժամանակ, մարզում գյուղատնտեսական վարկերի հասանելիության միջոցով նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը: Գյուղական համայնքների երիտասարդության համար աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտական կրթության հասանելիության և մատչելիության ապահովումը: